



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3105

C'puyfubp O.
Cuepmap ueftpuyfubpms

82

C-98

Օ. ՇՐԱՅՆԷՐ

ՄԱՏՈՒՈՒ ԱԻԵՐԱԿՆԵՐՈՒՄ

Թ.Ա.Բ.Գ.Բ. ԳԻՒՏ Ա. ԳԱՀ. ԱԳԱՆԵԱՆՑ

(Արտատպւած «Լուսա» հանդիսից)



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Տպարան Տ. Մ. Ռօտինկանցի

1901

82
7-98

13.07.2013

23 JUN 2005

2 NOV 2009

Օ. ՇՐԱՅՆԵՐ

այ:

ՄԱՏՈՒՈՒԻ ԱԻԵՐԱԿՆԵՐՈՒՄ

ԹԱՐԳՄ. ԳԻՆՏ Ա. ՔԱՀ. ԱՂԱՆԵԱՆՑ

5654

(Արտատպած «Լուսա» հանդիսից)

Ճ-ՃՅ
Ճ-Ճ



Թ Ի Յ Լ Ի Ս
Տպարան Տ. Մ. Ռօտինկայի
1901



2005 JUL 85

3105

2 NOV 2005

ՄԱՍՆԻՒՄ ԵՐԵՎԱՆԻ

Дозволено цензурою, Тифлисъ, 29 Октября,
1901 г.

ՄԱՍՆԻՒՄ ԵՐԵՎԱՆԻՄ

(Օ. ՇՐԱՏՆԵՐԻ)



որս մերկ պատեր են.
 նոցա վերայ նկա-
 րուած է Յիսուսի
 պատկերը, խաչը ու-
 սին, աստուածային
 Մանուկը մասամբ եղ-
 ծուած, Ամենասուրբ Կոյ-
 սը կապոյտ ու կարմիր
 հանդերձներում, հռովմէական գինուօրններ
 և էլի Քրիստոսը ձեռները կապկալած: Կտուրը
 փուլ է եկած և վերեւից երևում է բոց եր-
 վինքը, իտալական կապոյտ երկինքը. անձրևը
 ծաղիտիքներ է բացել պատերի մէջ, իսկ սոցա

Ս 1 1 2 1 4

1901

Տեփը արդէն թափուում է ինքն իրան: Մատուռը մէն մենակ է, բարձր մի տեղ, հրուանդանի հէնց գագաթին, և զիշեր ցերեկ ծովի ալիքները խփուում են նորա ստորոտին: Ամանք ասում են, որ շինած է այնտեղ՝ ներքեր—կղզու վերայ ապրող կրօնաւորների շեքով, որպէս զի կարողանան իրանց նեղացած-հիւանդներին տանել այնտեղ: Միւսները, թէ մեծ ճանապարհով անցնող կրօնաւորներն ու ուղևորներն են կառուցել, որ իբրև օթևան և աղօթատեղի ծառայէ իրանց: Բայց այժմ էլ ոչ ոք չէ իջևանում մատուռում աղօթելու, և այլ ևս հիւանդներ չեն տանում բժշկութեան համար:

Մատուռի ետևից անցնում է հռովմէական հին ճանապարհը: Եթէ մի կերպ բարձրանաք այնտեղ բարձրովին միայնակ և մի ջերմ, արև օր նստէք, ձեզ այնպէս կ'թռայ թէ քարայտակի վերայ լսում էք հռովմէական գինուորների քայլերի ձայնը, նոցա զէնքերի շաշիւնը և այն հեռաւոր ժամանակների յուշերը, երբ Աննիբալն իւր զօրքերով ներս էր խուժում թաւուտի մէջ, իսկ այնտեղ էլ աւելի ճանապարհ չկար: Այժմ կատարեալ լուսթիւն էր տիրում: Փամանակ առ ժամանակ քարայտակի քարերի վերայից ջո-

րու ոտնածայնը կլսէք—գա գեղջկուհին է, որ կողովների մէջտեղը նստած՝ անց է կենում. կամ կտեսնէք մի սլառաւ, գլխին կապոց գրած գնալիս, և կամ աւազակալին զարհուրելի կերպարանքով մի մարդ, դագանակը ձեռին, շտապով անցնելիս ճանապարհով: Բայց այնուամենայնիւ մատուռը մէն մենակ է կանգնած. նորա երկու կողքերից ծովածոցերն են և նորա ձայնը հնչում է ծովի ալիքների խփուելուց նոյն իսկ ստորոտում:

Ես գնացի այնտեղ մի ձմեռուայ օր, երբ կէսօրին ջերմ արևը ամեն ինչ այրում էր հին ճանապարհի վերայ: Ես յոգնեցի, և ճանապարհը զառիվեր թուաց ինձ: Մտայ մատուռը, մօտեցայ քարուքանդ լուսամտին և սկսայ նայել դէպի ծովը: Հեռու, հեռու ծոցի կապուտ ջրի ետևը երևում էին քաղաքներ և գիւղեր, որոնք ինչպէս սպիտակ և կարմիր բծեր ցրուած էին լեռների կանաչ փեշերի վերայ, իսկ լեռների գագաթները բարձրանում էին գրեթէ մինչև երկինք, որոնք երբեմն երևում էին, ու երբեմն էլ ամպերի տակ ծածկուում: Ինձ թւում էր, որ գագաթները կանչում են ինձ իրանց մօտ, բայց գիտեմ, որ երբէք ոչ մի կամուրջ միացնել չէ կարող ինձ նոցա հետ, երբէք, երբէք: Ես աչքերս

ծածկեցի ձեռքերով և երեսս շուռ տուի: Այգտեսարանն անտանելի էր ինձ համար:

Ես սկսայ մանգալ մատուռի աւերակներում, նայեցի խաչակիր Յիսուսին, Մանուկ-Փրկչին, հռովմէական զինուորներին, նոցա ծալած ձեռներին և դուրս եկայ բաց դաւիթն ու նստեցի քարի վերայ: Ոտներիս առջև փոքրիկ ծովախորշ կար ու մի շարք սպիտակ աներ, որոնք թաղուած էին ձիթենու ծառերի կանաչի մէջ, իսկ ալիքների սպիտակ փրփուրը ինչպէս մի երկայն նեղ ժապաւէն պատում էր ծովափը. յոգնած լինելով՝ ես թինկը տուի ծնկանս վերայ: Ես չափազանց յոգնել էի — յոգնածութիւնս ինձ օրուայ տապից աւելի հին էր թւում, հռովմէական հին ճանապարհի քարերի արեակէզից հին, և ես գլուխս ծընկանս դրի ու սկսեցի ականջ դնել երեք հարիւր ոտնաչափ ինձանից ներքև խիռուղ ալիքներին և ձիթենու ճիւղերի ու հին կամարների միջև շառաչող հողմին, և քունս տարաւ: Քնի մէջ մի երազ տեսայ.

Մարդը աղերսում էր Աստուծուն և Աստուած Հրեշտակին ուղարկեց նորան օգնութիւն. հրեշտակը դարձաւ և ասաց.

«Ես այդ մարդուն օգնել չեմ կարող»: «Ի՞նչ է նորա ուղածը», ասաց Աստուած:

Հրեշտակը պատասխանեց. «անդադար ազադակում ու կոծում է, որ մէկը անպատուել է իրան և որ ինքը ցանկանում է նորան ներել, բայց չէ կարող»:

Աստուած ասաց, «Դու ի՞նչ արիր նորա համար»:

Հրեշտակը պատասխանեց. «Ամեն բան: Բռնեցի ձեռքից և ասացի. լսիր, երբ այս վատ մարդու մասին բան ասեն, դու լաւ խօսիր. ծածուկ, նորա համար աննկատելի կերպով օգնիր, ուր և կարող լինիս, մասնատրիր նորան այն ամենից, ինչ որ ամենից թանգ բան ունիս, և հետզհետէ, այս կերպով ծառայելով՝ կզգաս, որ շահել ես նորա սիրտը և որ ներել ես նորան»: Եւ մարդը ասաց. «լաւ, ես այդ կանեմ»: Բայց լետոյ մի մութ գիշեր նորից լսեցի նորա հեծկըլտոցը. «Ամեն բան արի: Ոչ մի միջոց չէ օգնում: Ես չեմ թեթեւանում լոկ այն բանով, որ լաւ եմ խօսում նորա մասին: Եւ թէկուզ հէնց սեպհական արիւնս թափեմ նորա համար, էլի չեմ կարող սրտիս ատելութիւնը ոչնչացնել: Չեմ կարողանում ներել, սով Աստուած, չեմ կարողանում, չէ»:

Ապա նորան ասացի. «Նայիր այս կողմ, տես քո անցեալը, մանուկ հասակիցդ սկսած,

տես քո փոքրիւթիւնն ու անարդարութիւնը, լաւ նայիր բոլոր սխալներիդ և պակասութիւններիդ վերայ և մի՛թէ այնուհետև նոյն իսկ կեանքիդ լուսի տակ չես տեսնի եղբօրդ ինչպէս մի տարբեր մարդ: Մի՛թէ դու այնքան անմեղ ես, որ իրաւունք ես համարում ուրիշին ատել:»

Եւ նա նայեց ու ասաց. «այն, ուղիղ ես ասում, ես ևս մեղանչել եմ և ներում եմ եղբայրակցիս: Բաւական է, գնա—ես ներեցի»: Նա հանգիստ պարկեց և ձեռքերը խաչեց կրծքին, և ես մտածեցի, որ արդէն մարդու հոգին հանգստութիւն գտաւ: Բայց դեռ թեքըս չէի թափահարել երկինք բարձրանալու համար, երբ նորից վայնասուն լսեցի երկրի վերայ. «ես ներել չեմ կարող, ով Աստուած, չեմ կարող: Աւելի լաւ է մեռնեմ, քան ատեմ: Ես չեմ կարող ներել»:

Ես մօտ գնացի նորա կացարանին և միտան մէջ կանգնեցի դրան ետև ու լսեցի նորա աղաղակը.

«Ես էլ եմ մեղանչել, բայց ոչ այդպէս: Եթէ ես երբ և իցէ ընկերակցիս մի չնչին վերք եմ հասցրել, ծունկ եմ չոքել նորա առաջ և սկսել եմ համբուրել նորա վերքը մինչև որ բժշկուել է: Ես չեմ թոյլ տուել,

որ ում և իցէ հոգին կորչի դէպ ինձ ունեցած ատելութեան շնորհիւ: Եւ եթէ ով և իցէ թէկուզ հէնց մտքովն անց է կացրել, որ ես վիրաւորել եմ նորան, ես նորա առաջ երեսնիվայր եմ ընկել, որ ստներով տրորէ ինձ և այսպիսով, տեսնելով իմ նուաստանալը իւր առջև, կարողանայ ներել ինձ և հոգի չկորցնէ: Բայց իմ հոգու մասին ոչ ոք չէ մտածել, ոչ ոք չէ կամեցել փրկել ինձ կորստից և ոչ մի քայլ չէ արել, որով ես կարողանայի նորան ներել:

Ես նորան ասացի. «Ասիր, հանգստացիր: Եթէ չես կարող, ուրեմն մի՛ ներիր քեզ վիրաւորողին, բայց մոռացիր նորան և նորա արածը, մոռացիր և ապրիր առաջուայ պէս: Գուցէ միւս կեանքում»...

«Հեռացիր գնա, աղաղակեց նա, ինչ եմ անում միւս կեանքը: Ես կորչում եմ այժմ, հէնց իսկոյն: Սրեւի լոյս տեսնել չեմ կարողանում, աչքերս փոշիով լիքն են և կոկորդս աւազով: Հեռացիր, ախ, երանի՛ թէ կեանքումս զոնէ մէկ անգամ տեսնէի, թէ ինչ սիրուն է լոյս աշխարհը: Աստուած իմ, Աստուած: Ես չեմ կարող առանց սիրելու ապրել, չեմ կարող ապրել ատելով»:

Այսպէս ուրեմն, ես նորան թողի լաց ու կոծի մէջ և դարձայ քեզ մօտ, Տէր:

Եւ Տէրը ասաց. «Այդ մարդու հոգին պէտք է փրկել»:

Հրեշտակը հարցրեց. «Ի՞նչպէս ազատենք»:

Աստուած ասաց. «Բարձիր գնա երկրի վերայ և ազատիր»:

Հրեշտակը հարցրեց. «Ի՞նչ անեմ, թէ ինչպէս ազատեմ»:

Տէրը խոնարհեց դէպի հրեշտակն ու ինչոր շնչաց ականջին, և Հրեշտակն թևերը տարածեց ու ցած թռաւ դէպի երկիր:

Ես արդէն զարթել էի, գլուխս ծնկանս վերայ կախած և նստած քարի վերայ, բայց ոյժ չունէի վերկենայու: Ես լսեցի, թէ ինչպէս հոգմը շառաչում էր ձիթենի ճիւղերի ու աւերակների կամարների միջով—և դարձեալ քնեցի:

Հրեշտակը դարձաւ երկիրս, գտաւ մարդուն կարծրացած սրտով, ձեռքից բռնեց և տարաւ մի տեղ:

Մարդը ոչ գիտէր թէ ուր է տանում իրան Հրեշտակը, և ոչ էլ թէ ինչ պէտք է ցոյց տար նորան: Երբ նոքա տեղ հասան, Հրեշտակը թևով ծածկեց մարդու կերպարանքը:

և երբ թևը լետ տարաւ, մարդը իւր առաջ ինչոր տեսաւ գետնի վերայ: Աստուած Հրեշտակին իրաւունք էր տուել մարդկային հոգին մերկացնել և վեր առնել նորանից այն արտաքին յատկանիշները, ձևերը, գոյնը, հասակը և սեռը, որոնք մարդուն որոշում են մնացեալ բոլոր իւր նմանակիցներից, և այդ հոգին այժմ դրուած էր իւր առաջ նոյնպիսի մերկ զրութեամբ, ինչպէս որ մարդ տեսնում է նորան, երբ իւր հայեացքները ուղղում է դէպի ներս:

Եւ նոքա տեսան իրանց առաջ նորա ամբողջ անցեալը. մանր աճող կեանքն ու մանկութիւնը իւր անմեղութեան քնքոյշ աղուամազով, տեսան թէ ինչպէս այդ աղուամազը փոքր առ փոքր ոչնչանում էր և տեղի էր տալիս երիտանարդութեան, ինչպէս մատաղ կեանքը ազահ շուրթերով խոնարհում էր դէպի կեանքի մեծ աւազանը, և ինչպէս նորա կողքից ջուրը ցած էր թափւում. նոքա տեսան բոլոր շիրականացած յոյսերն և մրտքի ու սրտի այն մոլորութիւնները, որոնց մարդիկ վեղբ են անուանում, և ներքին լուսափայլութեան այն վայրկեանները, որոնց մարդիկ կոչում են արդարութիւն, նորա կարողութեան և ոյժի օրերը, երբ վերանա-

լով՝ գոչում էր նա. «ես ամենակարող եմ» և փոքրագութեան ու թուլութեան օրերը, երբ վայր էր ընկնում գետին և փռուած պարկուծ հողի վերայ. տեսան ամենը, թէ ինչ կարող էր լինել այդ հողին, բայց որ երբէք չէ լինում:

Եւ մարդը գլուխը կտխեց:

Հրեշտակը հարցրեց նորան. «Սա ինչ է»:

Մարդը պատասխանեց. «այդ ես եմ, ես ինքս եմ»: Եւ նա մի շարժում արաւ, որով կարծես ուզում էր իրան սղմել այդ հողին, բայց Հրեշտակը յետ պահեց և ծածկեց նորա աչքերը:

Աստուած Հրեշտակին իրաւունք էր տուել նաև հողու միջից հանել ժամանակի, տարածութեան և հանգամանքների այն արտաքին լատկանիշները, որոնք մարդկային անհատական կեանքը որոշում են ամբողջ տիեզերական կեանքից:

Եւ Հրեշտակը նորից բացեց մարդու աչքերը ու սա թափանցեց:

Նա տեսաւ իւր առաջ, որ մի փոքրիկ կաթիլի մէջ ցոլանում է ամբողջ աշխարհը, ամենահեռաւոր աստղերի շարժուելը երկնային տարածութեան մէջ և բիւրեղների բարձրութիւնը երկրի խորքում, ուր աչք չէ դի-

պել. այն, որ սաղմը կենդանացնում է ձուի մէջ և կենսագործում նորածին մանկան մանրիկ մատները, որ կեանք է տալիս ամեն մի թերթիկի և ծաղկի, և որ ապրում է միայնակ անպարունակ ծովի խորքում, և նորա պայծառ մակերևոյթի վերայ, և լեռների մամուռով ու որքինով ծածկուած գագաթների վերայ, և մարդկային հողու մէջ:

Եւ մարդը խորասուզուած սկսաւ ուշադրութեամբ դիտել: Բայց Հրեշտակը իւր թևը դիպրեց նորան, և մարդը գլուխը ցած գցեց և բարեպաշտ շշուկով շշնջաց. «Սա Աստուած է»:

Հրեշտակը փակեց մարդու աչքերը: Եւ երբ նա նորից բաց արեց, մարդը տեսաւ, որ մէկը անցնում է նոցա մօտից: Դա հողին էր, արտաքուստ զգեստաւորուած և մարդու կերպարանք մտած, որովհետև Հրեշտակին Աստուած իրաւունք էր տուել ինչպէս զգեստ հագնել հողուն արտաքուստ, այնպէս էլ մերկացնել, և մարդը ճանաչեց անցուորակներին:

Հրեշտակը հարցրեց նորան. «գիտե՞ս այդ ով է»:

Մարդը պատասխանեց. «գիտեմ ով է»:

և նայեց նորա ետևից:



Հրեշտակը հարցրեց, «Ներեցի՞ր արդեօք նորան»:

Մարդը այսքան միայն ասաց. «Ինչքան զեղեցիկ է եղբայրս»:

Հրեշտակը նայեց մարդու աչքերին և փակեց իւր սեպհական պատկերը—այդ աչքերից բղխող լոյսը կուրացնում էր իրան: Եւ մեղմ կերպով ժպտաց ու վերադարձաւ Աստուծու մօտ:

Եւ երկու մարդիկ եղբայրացան երկրիս վերայ:

Ես զարթեցի:

Իմ գլխավերևը կապոյտ, կապոյտ երկինքն էր, իսկ հեռուում, ներքև, ալիքները խիւռում էին ափին: Ես անցնում եմ մատուռի միջով, նայում եմ Աստուածամօրը կապոյտ և կարմրով, խաչակիր Յիսուսին, հռովմէական զինուորներին և աստուածային Մանկուն եղծուած նկարին, և զառիվայր շաւղով իջնում եմ մեծ ճանապարհին: Երկու կողմերից բարձրանում էին ճիթենու ծառեր իրանց մոյգ պտուղներով և պսլծառ տերևներով, իսկ քարեայ պատերի արանքներից դուրս էին նայում մանրիկ ձնծաղիկներ: Կարծեմ թէ իմ քնած միջոցին անձրևը նորոգել էր ամբողջ բնութիւնը: Ինձ այնպէս է թր-

ւում, որ երբէք ես այդպէս գեղեցիկ չէի տեսել երկինքն ու երկիրը:

Իջնում եմ ճանապարհով, և նախկին յոգնութիւնս ու զառամութիւնս էլ չեմ ըզգում ամենեւին:

Շաւղի վերայով վերևից ահա իջնում է մի զիւղացի մանուկ. նա քշում էր մի էշ, որի երկու կողքերից երկու մեծ կողով էր բարձած. մանուկը դուրս եկաւ ճանապարհի վերայ և սկսաւ գնալ իմ առջևից: Առաջ երբէք չէի տեսած նորան: Բայց ես սրտով ուզում էի նորա հետ կողք կողքի միասին գնալ և նորա ձեռքը բռնել—այլ սակայն նա չէր կարող հասկանալ, թէ ես ինչու էի այդպէս անում:



Գ Ի Ն Տ Ա Պ Ա Յ Ա Ղ Ա Ն Ե Ա Ն Յ Ի

ա. աշխատությունները

1. Աղօթատետր դ. տպ. 1888	— 10
2. Կրօնի դասագիրք ա. տ. 1889 (սպասուած)	— 15
3. » » բ. տ. դ. տպ. 1891	— 25
4. » » գ. տ. գ. տպ.	— 25
5. Տօմար և տօնացոյց Հայաստ. եկ. բ. տպ. 1894	— 50
6. Կարնոյ դաղթը. պատմական տեսութիւն, 1891	— 10
7. Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ա. Բ. 1780 — 1834 Սահակ-Մեղրոսեան մրցանակին արժանացած 1893	2 —
8. Դիւան Հայոց պատմ. գիրք Գ. Արթուր կաթողիկոսի լիշատակարանը, կենսագրութեամբ, լաւելութեամբ ու ճանօթութիւններով, Պահակ-Մեղրոսեան մրցանակին արժանացած. 1894	7 —
9. Դիւան Հայոց պատմ. գիրք Գ. Լուկաս կաթող. 1780—1800 (լուսանկար պատկերով և վիմատիպ կենդակով) 1899	4 —
10. Կարգ աստուածաշարութեան Հայաստանեայց ա. եկեղեցոյ դ. տպ. 35 նկարով, 1901	— 50
11. Հրնից-նորից, հնախօս. ուղեոր. պրակ Ա. 1900.	— 30
12. Պատի օրացոյց 1902 ամի, ժամանակ. ԺԳ տարի	— 50
13. Նամակագիրք, 1902	— 40
14. Ծոցի օրացոյց 1902 ամի և լսուելուած.—Առողջապահական խոհարարութիւն	— 15

բ. թարգմանությունները

15. Հաւատարմութիւնը ամեն արդելքների չաղթում է Ֆ. Հոփմանի 1877	— 40
16. Խաարից գէպի լոյս. Ֆ. Հոփ 1878. (սպաս.)	— 40
17. Դօն Գիշօ լամանշեցի, Մ. Սէրփ 1878 (սպաս.)	— 70
18. Գէորդ Ռօլլէտօն, 1879 (սպասուած)	— 60
19. Երբորդ ոսկի, առակ Լակիդէի բ. տպ 1893	— 10
20. Ռօբինզօն (հրատ. Քիփլ. տպագր. ընկերութ.)	— 60
21. Չէստէրտօնի ժառանգը, պատկ ըսգարդ, 1882.	1 —
22. Ակաւ ա. տ. Միսօէվալի. 1885 (սպասուած).	— 50
23. Եան Երնատ Սմօլեար. Ն. Եանչուկ, 1885 (սպ.)	— 20
24. Արծուի մասամունքը, պրօֆ. Մ. Բոզդան. 1892.	— 5
25. Գիւղի սորբը, Ավետոսոյս Չէխի, 1892	— 10
26. Կեանքի պարտը, Գիկկէնի, 1892	— 1
27. Դէպի Աթէնք, Հ. Աննիկիշի 1896	— 10
28. Մի կտոր հաց, Պօտապէնկօի 1896	— 15
29. Որսորդ, Օ. Երայնէրի	— 10
30. Մատուռի աւերակներում, Օ. Երայնէրի	— 5
31. Կարա	— 5

